Արձանագրություն N3

ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-08/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի

հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

12.12.2024թ.
ժամը 14^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Վարդան Գասպարյան
Անդամներ՝ Դավիթ Գևորգյան
Քարտուղար՝ Արմինե Նավասարդյան

Նիստից բացակայում էր Պավել Սեդրակյանը:

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Վարդան Գասպարյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է «Թեոֆարմա» ՍՊԸ և «Պրոֆտեստ» ՍՊԸ մասնակիցներին հայտերում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Վարդան Գասպարյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 5, 9 - «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 6, 7, 8 - «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 4 - «Խաչպար» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 1 - «Թեոֆարմա» ՍՊԸ-ն:

2.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2, 3 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը:

2.3 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Գասպարյան

անդամներ՝ Դավիթ Գևորգյան

քարտուղար՝ Արմինե Նավասարդյան